

հանաները իրեն կը տանին՝ խստիւ կը յանդիմանէ ու կը պատժէ զանոնք<sup>(1)</sup>։

Յիշատակութեան այս արգելքը միայն մէկ ամիս կը տեէ։ Օգոստոս 11ին Խոճա Ռուհիճան, Խոճա Աստու և Պարսամ Չէլէպի Եղիազարի կը զիմեն ու կ'ազերսեն որ յիշատակել տայ կաթողիկոսը։ Եղիազար ընդառաջելով անոնց խնդրանքին, մանաւանդ Ռուհիճանի, որ Օսմանեան ականսիրն քով ճանչցուած մէկն էր և որուն օժանդակութեան պէտք ունէր սազիմական խնդրոց կարգադրութեան համար, միւս կողմէ նորանոր վրդովումներու տեղի չտալու զգուշաւորութեամբ՝ կը վերցնէ արգելքը և Օգոստոս 17ին, Վերափոխման տօնին օրը, կը վերսկսին կաթողիկոսի անուան յիշատակութիւնը։

Ու իսկապէս այդ օրերուն Եղիազար և Ռուհիճան Պօյնուէյրի մեծ վէզիրին ատեանը Յունաց ներկայութեան կը յաջողին հաստատել Հապէշներու վրայ Հայոց ունեցած իրաւունքը ու ըստ այնմ թագաւորական հրովարտակ մը հանել կու տան։ Ապա պէտք կը տեսնեն Պրուսայէն Կ. Պոլիս կոչել Աստուածատուր պատրիարքը՝ հրաւիրակ զրկելով իր աշակերտ Մարտիրոս վրդ. Ղրիմեցին։

Սեպտեմբեր 14ին, Վերացման Ս. Խաչի տօնին օրը, Եղիազար վրդ. Սուրբ Աստուածածնի եկեղեցին հրատեջտի քարոզը կը խօսի ու կը յայտնէ՝ թէ Գրիստոսի ողորմութեամբ երուսաղէմի խնդիրը յաջող վախ-

(1) Եղիազարի այս ընթացքէն կը տարուինք ենթադրել թէ անիկա, վերջ տալու համար Արևելցիներու տիրապետութեան, արդէն այդ տարիէն կը ծրագրէ բաժնել Օսմանեան բաժինի կամ՝ ինչպէս սովորութիւն էր ըսել՝ Հռոմոց ճան Հայերը Մայր Աթոռէն ու անոնց համար անջատ կաթողիկոսութիւն մը ստեղծել երուսաղէմի մէջ. ծրագիր՝ զօր իրազործեց ութ տարի ետք։